

## SULHU ԲԱՅԻ ԱՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

### ՆԵԿՏԱՐ ՄԻՍՈՆՅԱՆ

**Տանիմ** բայի մասին Հ. Աճառյանը Արմատական բառարանում գրում է, որ այն ունի «կրել, փոխադրել», ինչպես նաև, փխբ. նշումով, «պարունակել, բաւել, բովանդակել, տոկալ, համբերել, կատարել, գրաւել» իմաստները<sup>1</sup>: Այնուհետև բերում է բառի ստուգաբանության պատմությունը, որտեղ, կարծում ենք, առավել ուշագրավ է Ս. Բուզգեի ենթադրությունը. վերջինս այդ արմատի համար կանխադրում է \*տարնիմ < հնիւ. \*tr-nāmi, իբր սանս. tīras «ընդ», գնդ. tarō «վրայից անցնելով», սանս. tarāya «վրայից անցնել», հայ. տար «հեռու» են<sup>2</sup>:

Գ. Ջահուկյանը **տանիմ/տարայ** ձևերը համեմատում է հին հնդկ. tanōti «քաշում է, տարածում է», ավեստայի pairi-tanava «ուզում եմ քշել, հեռացնել», հին հուն. τανύω «ձգել, քաշել» բառերի հետ, նշում է նաև հին հնդկ. tārati «տեղափոխել, փոխադրել», ավեստայի tar- «անցնել մյուս կողմը», օսերեն tārīn «քշել»: Այս ձևերի համար կանխադրում է հ.-ե.\*ten- «քաշել» և \*ter- «կրել, տանել. փոխադրել, անցնել» նախաձևերը՝ իբրև տարբեր արմատների տարահիմք կիրառություն, եթե ենթադրելի չէ n/r-ով հիմքի առկայություն<sup>3</sup>: Հետագայում լույս տեսած «Հայերեն ստուգաբանական բառարանում» արդեն **տանիլ (տար)** արմատի համար նշում է նույն իմաստները, ինչ որ Աճառյանը, և համարում է անստույգ ծագման արմատ<sup>4</sup>:

Նոր հայկազյան բառարանում **տանիմ** բայի համար բերվում է երեք բառահոդված՝ «1. փոխադրել, տեղափոխել, 2. կարօղ լինել, պարունակել, բաւել, 3. համբերել, հանդուրժել, տոկալ», այնուհետև՝ «Ոճով սսի. Յինքն տարաւ գտէրութիւնն, այսինքն կալաւ»<sup>5</sup>:

Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում նույնպես բերվում են **տանիմ** բայի նույն իմաստները, իսկ **յինքն տանել**-ը բացատրվում է «տիրել, գրաւել, յափշտակել»<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 368 (այսուհետև՝ ՆԱԲ):

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս Джаукян Г. Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ133:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 720 (այսուհետև՝ ՀՍԲ):

<sup>5</sup> «Նոր բազմիքը հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 843 (այսուհետև՝ ՆՀԲ):

<sup>6</sup> Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հ. 2, Եր., 2000, էջ 539:

Ժամանակակից հայերենի բառարաններում *տանել* բայի իմաստների մեջ, ի թիվս «մի տեղից մի այլ տեղ փոխադրել, հեռացնել, մի տեղ հասցնել» և այլ իմաստների, նշվում են նաև «կրել, տոկալ, համբերել, դիմանալ», ինչպես նաև «խաղը շահել, մրցության մեջ հաղթող հանդիսանալ»<sup>7</sup>: Ս. Մալխասյանցի բառարանում նույնպես նշվում են «գրաւել, յափշտակել, խաղի մէջ յաղթել, շահել»<sup>8</sup> իմաստները: Հայերենի բացատրական բառարաններում բերվում է նաև *տանուլ տալ*-ը՝ «պարտություն կրել, հաղթվել, տարվել» իմաստներով<sup>9</sup>: Յարութիւն Գայալեանի բառարանում *տանիլ* բառի իմաստների մեջ նշվում են «յաղթութիւն տանել, յաղթել. (խաղի մէջ) շահիլ»<sup>10</sup>:

Հայերենի բարբառային բառարաններում ևս *տանել* բայի իմաստների մեջ նշվում են «հաղթել, խաղը շահել» (Արարատյան, Ղարաբաղի բարբառներ), *տանելուկի* «թղթախաղ» (Խոտրջուրի բարբառ)<sup>11</sup>: Ս.վ.Ամատունին *տանել*-ը հղում է *կթել*-ին՝ այն բացատրելով «խաղի մեջ փող կամ այլ ինչ տանել, կողոպտել զոք ի խաղու», իսկ *տանել*-ի բացատրության մեջ գրում է. «Կասեն Հայաստանցիք նաև խաղի մէջ յաղթելուն»<sup>12</sup>:

Վ. Իվանովը խեթերենում պահպանված հնդեվրոպական արմատներին նվիրված աշխատության մեջ գրում է նաև խեթերենի -mi խոնարհման պատկանող tarh- բայարմատի մասին, որը վկայված է հին հնդեվրոպական մի քանի լեզուներում: Նա գրում է. «Խեթերենի -mi խոնարհման պատկանող tarh- «հաղթել, գրավել» արմատական բայը հանգում է հին հ.-ե. մի շարք լեզուներում վկայված արմատի: Այդ բայի «հաղթել, գրավել» իմաստները ճշգրտորեն համապատասխանում են վեդայերենի tārati-ին՝ «նա հաղթում է», ավեստայի ti-tarənt-ին՝ «հաղթանակող»: Բայց հնդիրանական լեզուներում չի պահպանվել խեթերենի tarh-ին համապատասխանող արմատական աթեմատիկ բայը, չնայած կան այդ արմատին հանգող մեծ թվով բաղադրություններ»<sup>13</sup>: Այնուհետև Վ. Իվանովը նշում է, որ վեդայերենում այդ արմատը հանդիպում է նաև բարդ բառերում՝ որպես երկրորդ բաղադրիչ՝ *viśva-tur* «ամենահաղթ», *vr̥tra-túr* «թշնամուն հաղթող»: Նա բերում է նաև խեթերենի tarhuili- ածականը՝ «ուժեղ» նշանակությամբ, որում -ili-ն ածանց է,

<sup>7</sup> Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1409 (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Եր., 1969, էջ 442 (այսուհետև՝ ԺՀԲԲ):

<sup>8</sup> Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Եր., 1944, էջ 370 (այսուհետև՝ ՀԲԲ):

<sup>9</sup> Տե՛ս ԱՀԲԲ, էջ 1410 և ՀԲԲ, էջ 370:

<sup>10</sup> Յ. Գայալեան, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Գահիրե, 1938, էջ 486:

<sup>11</sup> Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», Եր., հ. 6, 2010, էջ 128:

<sup>12</sup> Ս. Վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 340:

<sup>13</sup> Иванов Вяч. Вс. Труды по этимологии индоевропейских и древнепреднеазиатских языков, т. 1, Индоевропейские корни в хеттском языке, Языки славянских культур, М., 2007, с. 74-75.

իսկ հիմքը՝ tarhu-ն, և ավելացնում է, որ tarhu՝ -u-ով հիմքը շատ ավելի հին ձև է, «ինչպես ցույց է տալիս համեմատությունը հ.-ե. մյուս լեզուների հետ», և բերում է վեդայական táru-tra «հաղթական», taru-, tr- «հաղթող» ձևերը<sup>14</sup>, սակայն, չի նշում, թե հնդեվրոպական որ նախաձևին են հանգում այդ արմատները:

Յ. Պոկորնու բառարանում բերվում են \*ter- tern-: tē-, trā-, teru- նախաձևերը՝ «հասնել, ձգտել, հետամուտ լինել, տեղափոխել, հաղթահարել, հաղթել» իմաստներով, և նշվում են հնդեվրոպական լեզուների՝ այդ նախաձևերին հանգող բառերը, որոնցում առկա են հետևյալ իմաստներով բառեր. հինդկ. tárati «փոխադրել, տեղափոխել, հաղթել», u- հիմքով՝ tarutē, tarvati «հաղթել, հաղթահարել», ածականը՝ turvāni «ամենահաղթ», ավ. -tara- «վրայով՝ վրայից անցնել, հաղթահարել, հաղթել», tarāni- «անցնել, առաջ շարժվել», ածական՝ tarā- «ուժեղ»<sup>15</sup>: Նա բերում է նաև այդ արմատի u-ով ձևերը հին հնդկերենում և ավեստայում, ինչպես նաև այն բաղադրությունները, որոնցում այդ արմատը բառերի երկրորդ բաղադրիչն է՝ հին հնդկ. āji-túr «կռվում հաղթել» նշանակությամբ, հունարեն νέκ-ταρ, որտեղ νέκ-ը «մահ» բառն է (հմմտ. νεκρός «ղիակ»), իսկ տար արմատը նշանակում է «հաղթել», այսինքն՝ «մահին հաղթող»: Պոկորնին նշում է նաև խեթ. tarhzi ձևը՝ «հաղթված, հաղթանակած» իմաստներով<sup>16</sup>: Հայերենի տանուլ ձևն էլ թերևս հ.-ե. u-ով հիմքի արտացոլումն է:

Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի՝ հնդեվրոպական լեզվին և հնդեվրոպացիներին նվիրված աշխատության մեջ բերվում է հինդկ. tirhā- «հաղթում է» ձևը, որը tárati-ի անցյալ դերբայն է, և համեմատվում է խեթ. tarh- «հաղթել» արմատի հետ<sup>17</sup>:

Սակայն ո՛չ Յ. Պոկորնին, ո՛չ Վ. Վ. Իվանովն ու Թ. Վ. Գամկրելիձեն հայերենի տանել/տարել բայերը չեն կապում հ.-ե. վերը նշված նախաձևի և հնդեվրոպական լեզուներում արտացոլված արմատների հետ:

Ուշագրավ է, որ հնդեվրոպական լեզուներում առկա են տանել բայի՝ հայերենի բառարաններում նշված գրեթե բոլոր իմաստները: **Տանել** բայի համար նշվում են նաև «Իր միջից հեղուկ բաց թողնել, հանել, դուրս ծորեցնել»<sup>18</sup> իմաստները: Հետաքրքիր է, որ այդպիսի նշանակություն ունեն նաև հուն. τράνω-ը «դուրս հոսել, դուրս ծորալ», հին հնդկ. ap-túr դերբայը՝ «ջուր բաց թողնող»<sup>19</sup>:

Վերը բերված ստուգաբանական նյութը հնարավորություն է ընձե-

<sup>14</sup> Sté u նույն տեղը:

<sup>15</sup> Sté u J. Pokorny, Indogermanisches Etymologisches Wörterbuch, I band, 1959, էջ 1074:

<sup>16</sup> Sté u նույն տեղը, էջ 1074-1075:

<sup>17</sup> Sté u Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс. Индоевропейский язык и индоевропейцы, т. 1, Тбилиси, 1984, էջ 205:

<sup>18</sup> ՀԲԲ, հ,4, էջ 370, **Հ. Աճառյան**, Հայերեն գավառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 1012:

<sup>19</sup> Sté u Յ. Պոկորնի, նշվ. աշխ., էջ 1074:

ռում անելու հետևյալ եզրահանգումները. ա) հայերենի **տանիմ** բային նույնպես կարելի է վերագրել հնդեվրոպական ծագում՝ նկատի ունենալով ն՝ հնչյունական, ն՝ իմաստային ընդհանրությունները հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված արմատների և բառերի հետ: Կարծում ենք՝ հաստատված պետք է համարել Գ. Ջահուկյանի այն ենթադրությունը, որ այստեղ առկա է հ.-ե. նույն նախաձևի n/r հերթագայությամբ արմատ. **n/r** հերթագայություն առկա է նաև այս արմատի՝ հին հնդկերենում պահպանված ձևերում՝ *tanoti - tārati* (**n/r** հերթագայությամբ ուրիշ արմատների օրինակներ կան նաև հ.-ե. այլ լեզուներում. հմմտ. սլավոնական լեզուների *дань-дар*, հուն. *δάνειον* և *δώρον*)<sup>20</sup>. բ) հայերենի **տանիմ** բայի «հաղթել, խաղի մեջ շահել, հաղթանակ տանել», ինչպես նաև «դուրս ծորալ, ջուր բաց թողնել» իմաստները ոչ թե այդ բայի իմաստային հետագա զարգացման արդյունք են, այլ հնդեվրոպական արմատի բնիմաստներից են, որ պահպանվել են նաև հայերենում:

**Բանալի բառեր** - *հնդեվրոպական լեզուներ, հնդեվրոպական նախաձև, հնդիրանական լեզուներ, ստուգաբանություն, բնիմաստ, տարահիմքություն, հերթագայություն*

**НЕКТАР СИМОНЯН – Об этимологии армянского глагола *տանիմ***. – В статье рассматриваются разные версии этимологии глагола **տանիմ**, происхождение которого считалось неясным. Обосновывается предположение Г. Джаукяна о его индоевропейском происхождении. Предлагается также считать исконными этимонами глагола **տանիմ** ранее никем не отмеченные значения: 1. победить, побеждать; 2. просочиться, просачиваться.

**Ключевые слова:** *индоевропейские языки, индоевропейская праформа, индоиранские языки, этимология, этимон, супплетивизм, чередование*

**NEKTAR SIMONYAN – On the Etymology of the Armenian Verb *տանիմ***. – The article dwells upon different versions of the verb **տանիմ** whose origin has always been considered unclear. The study results substantiate G. Jahukyan’s assumption on the Indo-European origin of this verb. Besides, the study reveals that the genuine etyma of the verb **տանիմ** are also the semes “1.win, conquer; 2.percolate” which have not been noted by anyone earlier.

**Key words:** *Indoeuropean languages, Indoeuropean prototype, Indo-Iranian languages, etymology, etymon, suppletion, alternation*

<sup>20</sup> *St u* **Фасмер М.** Этимологический словарь русского языка, т. 1, М., 1986, էջ 484, **Дворецкий И. Х.** Древнегреческо-русский словарь, т.1, М., 1958, էջ 342, 443: